*Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ*

**«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 26.07.2022 թ. թիվ 04 արձանագրությամբ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Բյուրոյի «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների Հավելված 6.1-ով սահմանված պարզեցված հատուցման գործընթացի գործողությունների հաջորդականությունը, և RL 1-001 կանոնների 113-րդ կետի և Հավելված 10-ի 2-րդ կետի պահանջները խախտելու համար ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու և թույլ տված խախտումը վերացնելու հանձնարարականով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ
ՀՀ, 0010 Երևան, Հանրապետության 22
Հեռ. (+374 11) 55 17 55, ՀՎՀՀ 02709202
Էլ. փոստ info@paap.am, www.appa.am